

ուխտադրուժ մը եղած է, ամէնքն ալ դուանութեամբ զուտ միաբնակներ են: Նոյն իսկ ըստ նոյն ժամանակագրութեան, Մարտիրոս պատրիարք միաբնակութիւնը ջատարարութիւն մը ունի, ինչպէս նաև թուղթ մը՝ Աղեքսանդրոյ Պետրոս պատրիարքին: Երուսաղէմի մէջ միաբնակութեան դէմ հալածանքը կը սկսի Յուստինոս կայսեր օրով (518-521), որուն գործադրողը կ'ըլլայ կայսեր օգնականը Յուստինիանոս, Յովհաննէս պատրիարքի ձեռքով: Այդ ժամանակին էր որ մեծ սագնապ յառաջ եկաւ Երուսաղէմի հայ վանականներուն մէջ, ինչպէս յայտանի կ'ըլլայ մասնաւորապէս նոյն Յովհաննէս պատրիարքին Աղուանից Արաս կաթողիկոսին գրած նամակէն, որուն հայերէն թարգմանութիւնը հրատարակուած է 1896 ին Վաղարշապատի մէջ: Յուստինոսի յաջորդը՝ Յուստինիանոս իր արևմտեան քաղաքականութեանը համար ա'լ աւելի յառաջ տարաւ հալածանքը Երուսաղէմի մէջ և շարունակուեցաւ ան մինչև Արաբաց արշաւանքը:

Գրեցինք այս սողերը հասկցնելու համար թէ ներքինները Երուսաղէմ այցելեցին Անաստաս կայսեր օրով: Անոնք Զենոնէն սկսեալ միաբնակ դաւանանք ունէին, և կը դիմէին Երուսաղէմի եկեղեցիին որ նոյն ժամանակ գլխովին միաբնակ էր, ինչպէս ցոյց կու տայ ասորի ժամանակագրութիւնը: Ուրեմն պարզապէս կը հասկցուի թէ Նղիայի երկու վանքերէն մին գնող բիւզանդական արքունիքէն եկած ներքինները միաբնակ էին և թէ անոնք քաջայերու թիւն և պաշտպանութիւն կը սպասէին Երուսաղէմի եկեղեցիէն, որ տակաւին չէր արձակած մուկուանդութեան և դրժումի շանթերը ընդդէմ Հայ Եկեղեցոյ և այլ միաբնակ արևելեան եկեղեցիներուն:

3. — Վերև յիշատակուած ասորերէն ժամանակագրութեանէն կը հասկնանք նաև որ Պետրոս վրացիին վանքին հիմնադրութեան օգնողը ներքինի մ'էր, Յովհաննէս անուն, որ միևնոյն ժամանակ անոր կնքահայրն էր: Նոյնպէս Զաքարիա հետորի մեկենասը՝ Եւպրատիոս ներքինի մ'էր և կայսեր սենեկապան. այս երկուքն ալ դաւանութեամբ միաբնակ էին: Հանգիստութեան կանոնով կը տարուինք մտածել թէ «բարեպաշտ և ուղղափառ թագաւորաց» որով բիւզանդական պալատին այն ներքինները որոնք Երուսաղէմ եկան և Զ. դարու սկիզբները Նղիայի վան-